6. ԼՈՒՍԵՐԵՍԻԿ

Կէղնի, չէղնի մե հատ նախրչի կէղնի։ Էդ նախրչու կնիկ կը մեռնի. կը մընա նախրչին ու Լուսերեսիկ ախչիկ։

Մեկ օր ախչիկն ա կըսա.— Հայրիկ, դու հըր ե՞փ չըս կարքվի։

— Բալա ջան,— կըսա,— օր կարքվա, խորթ մեր բերեցի, քըզի նեղութուն կիտա։—Կըսա.— Լավ, բալա ջան, դու օր էտքան սրտով կըսես՝ «Գնա կարքվի», ես լե կէթամ։

Նախրչին էր գնաց, տեսավ, մե հատ ճամփու վրեն, կնիկ մի նստուկ էր։ Ըսեց.— Բի՛ձա, դո՞ր կէրթաս։

Ըսեց թե.— Օրբեվերի մարթ եմ, կէթամ ընձի կնիկ գտնալու։

Կնիկն էր, ըսեց թե.— Բի՛ձա ջան, ես լե օրբեվերի կնիկ եմ, արի առնինք հ'իրար։

Նախրչին ու կնիկն էտտեղ առան հ'իրար։

Կնիկն ըսեց.— Մա՛րթ ջան, դուն նստի հ'ոտի, ես էթամ իմ տուն ու դամ։

Կնիկն էր, գնաց ուր տուն. ի՞նչ վերցուց ուր տնեն. մե հատ հայլի ու դարձավ էկավ, նախրչու հետ էկան տուն։ Լուսերեսիկն էր, էտտեղ ուրախցավ թե՝ ընձի մեր էկավ։ Տաս օր օր թըմմավ, մերն քաշեց Լուսերեսիկին տփեց։ Կնկա հայլին սեյրբազութուն կէներ։ Կնիկն էր, ղարթրվավ, հ'ելամ կայնավ հայլու հ'առեչ։ «Հայլի, հայլի, ես եմ խորոտ, թե ընձնից լե խորոտ կա»։ «Դու խորոտ ես, համա քու Լուսերեսիկ ախչիկ քեզնից լե խորոտ ա»։ Կնիկն էր, կանչեց ուր միլչիկներ թե՝ արեք իմ Լուսերեսիկ ախչկան տարեք վերչացուցեք. ընչի՞ պըտի ընձնե խորոտ էղնի։

Միլչիկներ առան Լուսերեսիկ ախչկան ու քաղքից դուս էկան։ Լուսերեսիկ ախչիկն էր, միլչիկներուն խնթրվավ, ըսեց.— Տղեկներ, ընձի մի՛ ըսպանեք. մե հատ խուշ բռնեք, մորթեք, արուն հանեք, քսեմ իմ շապկին՝ տարեք տվեք իմ մոր նշանց։

Լուսերեսիկ ախչիկն էր, հ'ելավ, գնաց տեսավ հանտա մե հատ տուն, ո՛չ մարթ կա, ո՛չ մադատ. հ'ըմմեն բան պատրաստուկ։ Լուսերեսիկն էր, կերավ, խմեց, հ'ելավ քնավ։

Դու մըսե, էգի յոթ ախպոր տուն ա։ Յոթ ախպերներ գացած են ավ ու խուշ էնելու։ Լուսերեսիկ ախչիկն էր, քներ էր, կառավաթի վրեն. լուս էղել էր, վըր Լուսերեսիկ ախչկա վրեն։

Յոթ ախպոր մե հատ իմաստուն շուն կար։ Իրիկուն էր. յոթ ախպեր տուն էկան։ Իմաստուն շուն էր. զիկեր փաթթվեր յոթ ախպոր օտներ, թաթն կիտեր, կը զարկեր Լուսերեսիկ ախչկա կառավաթի վրեն։ Յոթ ախպերներ ըսեցին.

— Օ՜, մեր տուն մարթ ա մտեր ա։

Գացին, տեսան օր հանտա մե հատ ախչիկ վըր քամկին պառկեր ա, լուս քիթ ու բերնին իչեր ա։ Իրեք պզտիկ ախպերներն էր ըսեցին.

— Արի՛ք, հ'իմցունք, տեսնանք ի՞նչ ախչիկ ա։

Չորս ջոչ ախպրտանքն են ըսեցին.—Չէ՛, չհ'իմցունք, էդի աստված մըզի քուր ա ճամփեր ա։

Յոթ ախպրով նստան, հով էրեցին Լուսերեսիկ ախչկան, քնցուցին։ Լուսերեսիկ ախչիկն էր, ուր քուն առավ, իմցավ հ'ելավ, տեսավ՝ օր յոթ հատ տղա նստուկ ուր կըշտի հետ։

Յոթ ախպերն էր ըսեցին.— Դու մեր քուր, մենք քու ախպըրտանք։ Քուր շան, մենք կէթանք ավ ու խուշ էնելու, դու տուն պաշտպանա։ Դարբըգներ կը փակիս, մարթ չըս թողի։ Ինչ օր գուղիս, մենք կը բերինք։

Խաբար գնաց հասավ խորթ մոր։ Խորթ մերն էր. զարավ-զարդըրվավ, հ'ելավ կայնավ հայլու առեչ։ «Հա՛յլի, հա՛յլի, ե՞ս եմ սիրուն, թե՞ ինձնից լե սիրուն կա»։ «Դու խորոտ ես, համա քու Լուսերեսիկ ախչիկ քեզնից լե խորոտ ա, յոթ ախպոր քուր ա»։

Խորթ մերն էր, ըսեց.— Էլ հնարք չէղնի. էթամ մե հատ պառվու բերիմ ճամփիմ, էթա ընդրան վնասա։

Կնիկն էր, հ'ելավ, գնաց պառվուն բերեց տուն. ըսեց.—Նա՛նե, իդա սանդր կը դեղիմ, տանիս կիտաս Լուսերեսիկ ախչկան։ Օր սանդր զարկեց գլոխ, հոդից կը մեռնի էն ախչիկ։

Նանեն էր, փեշեր քշտեց ու գնաց։ Գնաց դարբազի դուռ տփեց.

— Ա՛խչի, ա՛խչի դուռ բանաս։

— Նանե շան, չըմ բանա, իմ ախպրտանք չըն թողի։

— Դը լավ, օր չըս բանի՝ ճամփուց մե հատ սանդր իմ գտերի, ակուշկեն բաց՝ տամ։

Լուսերեսիկ ախչիկն էր, սանդր առավ, զարկեց գլոխ ու մեռավ։

Պառավն էր, դառցավ էկավ՝ կնկան ըսեց.— Լուսերեսիկ ախչիկ մեռավ, ես էկա։

Կնիկն էր, հ՚ելավ, զարավ-զարդրվավ կայնավ հայլու հ՚առեչ։ «Հա՛յլի, հա՛յլի, ե՞ս եմ խորոտ, թե՞ ընձնից լե խորոտ կա»։ «Դու խորոտ ես, համա քու Լուսերեսիկ ախչիկ քեզնից լե խորոտ ա, մեռեր ա»։ Խորթ մերն էր ուրախցավ թե՝ Լուսերեսիկ ախչիկ մեռեր ա։

Խաբար տանք յոթ ախպոր։ Յոթ ախպերն էր, էկան, տեսան օր դարբգներու դուռ փակ ա։

Մեկ լե տեսան, իմաստուն շուն ակուշկից դուս էկավ։ Յոթ ախպերն էր, ակուշկից իշկեցին, տեսան Լուսերեսիկ մեռուկ ա։

Իմաստուն շուն էր, առալ մեկ պզտիկ ախպրտանքներուց, իչավ տան մեչ։ Իմաստուն շուն էր, տարավ թաթն զարկեց ախչկա ծամերու մեչ։ Պզտիկ ախպերն էր, տեսավ հանդա մե հատ սանդր ախչկա ծամերու մեչ։ Ձեռ թալեց, սանդր հանեց, Լուսերեսիկ ախչիկ սաղցավ, հ՚ելավ նստավ։ Պզտիկ ախպերն էր, ուրախցավ, դարբզի դռներ բացեց, վեց ախպոր կանչեց։

Յոթ ախպերն էր, հ՚ելան ըսին.— Քո՛ւր շան, էդ ի՞նչ օյին է էղե գլոխդ։

Ըսեց.— Մե հատ պառավ էկավ, ակուշկից սանդր թալեց տան մեչ, ես վերցուցի զարկի գլոխս, մեռա։

Յոթ ախպերն էր ըսեցին.—Մենք ըսեցինք, օր ինչ օր դու գուզիս մենք կը բեջրինք, ինչի՞ առար։

Քուրն էր ըսեց թե.—Խափվա։— Բերեցին, նստան, կերան խմեցին հ՚ֆչարու հետ, հ՚ելան քնան։

Սաբահտան էր, բացվավ վըր ուրանց։ Յոթ ախպերներ ըսեցին.— Քուր շան, մենք կէթանք ավ ու խուշ կէնինք. մարթ չը թողիս նես։ Ինչ կը բերին ծախին, չառնիս։

Խաբար տանք խորթ մոր։ Խորթ մերն էր, հ՚ելավ, զարավ-զարդրվավ, կայնավ հայելու հ՚առեչ։ «Հա՛յլի, հա՛յլի, ե՞ս եմ սիրուն, թե՞ ընձնից լե խորոտ կա»։ «Դու խորոտ ես, համա քու Լուսերեսիկ

ախչիկ քեզնից լե խորոտ ա, յոթ ախպոր քուր ա»։ Խորթ մերն էր, կանչեց պառվին բիրեց, ըսեց.— Ջոչո, բա դու կըսես մեռեր ա։

Պառավն էր ըսեց.— Հ'իմցած, սանդր դլխուց քաշած, սաղցած։

Խորթ մերն էր, ըսեց թե.— Էլ էդմալ չէղնի,— ըսեց,— Նանե, արի էրկու հատ խնձոր տամ քու ձեռ՝ մեկն դեղուկ, մեկն չըդեղուկ։ Տանիս ընդրա դեմ. էն անդեղել դու կուտիս, դեղուկ կիտաս Լուսերեսիկ ախչիկ կուաա։

Նանեն էր, առավ խնձորներ, դնաց ակուշկի դեմ կայնավ։— Ըսեց.— Ա՛խչի ջան, մե խնձոր կերեր իմ, մեկ լե մացե ձեռքս, չեմ կրրա ուտի, արի տամ քըղիկ։

Ախչիկն էր, ձեռնեն առավ, կտոր կերավ, կտոր թալեց իմաստուն շան։ Ախչիկն էտտեղ մեռավ, շուն լե սատկավ։ Թողեց պառավն ու դարցավ։

Էկավ ըսեց.— Ախչիկ մեռավ, շուն լե սատկավ, ես էկա։

Խորթ մերն էր, հ'ելավ, պառվու կշռանով օսկի տվեց պառվուն ու շատ ուրախցավ։

Խարար տանք յոթ ախպոր։ Յոթ ախպերն էր, էկան տեսան՝ ո՛չ շուն կա, ո՛չ ուրանց քուր։ Ջարկին դարբաղի դուռ շարդեցին, տեսան, օր շուն լե սատկե, քուր լե մեռե։ Շորեր քանդին, գլոխ քանդին՝ հնար չէրեցին. Յոթ ախպեր լե նստան ու լացին։

Պղտիկ ախպրտանք ըսին.— Արեք տանինք գերեզման հորինք։

Ջոչ ախպրտանք ըսին.—Չէ՛, գերեզման չը հորինք. գնանը թաբուտ, ծառից կախինք։ Էթանք ավ ու խուշ էնինք, գանք մեր քուրոչ տեսնանք, գանք տուն։

Խաբար տանք Լուսերեսիկի հոր քաղքի թաքավորի տղից։

Թաքավորի տղեն նոր ա իմացեր, ուր սիրահար քաղքից դուս ա էկե, յոթ ախպոր քուր ա էղե։ Հ'ելավ ճամփա ընկավ ու գնաց։ Գնաց յոթ ախպոր տուն հարցուց։ Յոթ ախպեր իրդուն տուն էկան։ Էլ չըսեց թե՝ իմ սիրահարն է էտ ախչիկ, թե՝ «Իմ քուր Լուսերեսիկ ձեր տուն ա՞»։

Յոթ ախպերն էր, ըսեցին.— Մեր տուն ա, համա մեռած ա։

—Գերեզման ո՞ր տեխն ա, ընձի նշանց տվեք։

Յոթ ախպերն էր ըսեցին։—Գերեզման չենք հորե, դրեր ինչ թաբուտ, ծառից կախեր ենք։

Յոթ ախպերն էր, էղան ութ ախպեր՝ գացին քուրոչ կուշտ։ Թաքավորի տղեն էր, ըսեց թե.—Ես պիտի իմ քուրոչ դնեմ հողի մեջ։

Յոթ ախպեր կայնան ըսին.— Չենք իտա տանիս։

Թաքավորի աղեն էր, շատ խնթրվավ, նաշրն շլկեց ու գնաց։ Մի վերսի վրա գնաց, շրրիտ կրտրավ, նաշրն պըլը՛տ գետին ընկավ, խնձոր ախչկա բերնեն թռավ։ Լուսերեսիկ ախչիկն էր, աչքեր բացեց, տեսավ ուր սիրահար ուր կշտին կայնուկ էր, թաքավորի տղեն էր, շորեր հանեց, ախչկան զարեց-գարդրեց, ուր հ'ետև էսկեց։

Խաբար տանք խորթ մոր։ Խորթ մերն էր, զարավ-զարդրվավ, հայլու հ'առեչ կայնավ։ «Հա՛յլի, հա՛յլի, ե՞ս եմ խորոտ, թե՞ ընձանից լե խորոտ կաց։ «Դու խորոտ ես, համա քու Լուսերեսիկ ախչիկ քեզնից լե խորոտ ա, հ'ընկե թաքավորի տղու հ'ետևն ու գիկաց։

Կնիկն էր ըսեց.— Վա՛յ, քու տերն հորիմ. էդ ի՛նչ լուր էր տըվեցիր։

Զարկեց հայլին ու կոտրեց։

Տղեն ու ախչիկ իրար հ'ետավ հ'ելան էկան խորթ մոր դուռ։ Թաքավորի տղեն էր, բոռաց, ըսեց.

— Մա՛յրիկ, դուրս արի ընձի ու քու Լուսերեսիկ ախչկան տես։

Խորթ մերն էր դուրս էկավ տեսավ, ի՞նչ տեսավ, օսկեծամն է՞ր, օսկեշորեր հագին. իրեք բերան վա՛յ էրեց ու ցըխավ ամեկ մեկ պատ։

Էրկնուց հ'ընկավ չորս հատ խնձոր. մեկը ըսողին, մեկը գրողին, մեկ լե անգամ էրողին, մեկ լե նստողին։ Ընդոնք հասան ուլանց մուրազին, դուք լե հասնեք ձեր մուրազին։